ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2014թ. թիվ 210-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին» թիվ 440-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. հունիսի 6-ի «Լոռու մարզի առողջապահական ընկերությունների տնօրենների ընտրության (նշանակման) մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու մասին» թիվ 201-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Սամվել Լամբարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Վարդանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. հունիսի 10
ք.Վանաձոր